

ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ՀԻՄՆԱԻՈՐՈՒՄԸ

Grounding of Ethics

Ի՞նչ կը նշանակէ՝ **բարոյագիտութիւնը հիմնաւորել**: Արդեօք պէ՞տք է կամ հա՞րկ է բարոյագիտութիւնը հիմնաւորել: Եթէ այո, ի՞նչ են բարոյագիտութեան հիմնաւորման առաւելութիւններն ու թերութիւնները: Եւ վերջապէս ինչպէ՞ս կարելի է բարոյագիտութիւնը հիմնաւորել:

Բարոյագիտութիւնը, անելի քան 2500 տարուան կեանք ունեցող արեւմտեան փիլիսոփայութեան մէկ ճիւղն է: Փիլիսոփայութեան սկզբնական շրջանէն ի վեր, մարդիկ կը փիլիսոփայեն՝ ճանաչումի, իմացութեան ու գիտութեան, ինչպէս նաեւ վարմունքի ու վարուելակերպի մասին: Ժամանակի ընթացքին, ինչպէս ներկայացուեցաւ բարոյագիտութեան պատմութեան մէջ յառաջացած են բարոյագիտական զանազան տեսութիւններ, որոնք ընդհանրապէս ծագում առած են մարդոց առօրեայ կեանքէն եւ փորձառութիւններէն: Այդ զանազան տեսութիւնները, իրարու հետ մրցակցական յարաբերութեան մէջ եղած են. ուրեմն երբեք զարմանալի չէ, որ փիլիսոփաներ կը ջանային իրենց բարոյագիտական տեսութեան ընդունելի հիմնաւորում մը տալ, զայն անելի համոզիչ դարձնելու համար:

Բարոյագիտութեան հիմնաւորման ծրագիրը նկատի կ'առնէ անհատի բանականութիւնը եւ ազատութեան հետեւանք՝ ինքնավարութիւնը: Այլ խօսքով, անհատը, իր հայեցողութեամբ եւ դատողութեամբ կրնայ հիմնաւորում մը ընդունիլ կամ մերժել: Այս իմաստով, հիմնաւորման ծրագիրը պէտք է հեռու մնայ՝ աւանդական սովորութիւններէն, կրօնական վարդապետութիւններէն, անհատական կամ պետական հեղինակութիւններէն: